# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 152

**ք. Երևան** **12.12.2022թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14.3/31210-2022, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.6/15582-2022, ՀՀ էկոնոմիկայի 03/20083-2022 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության և ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/13514-2022 և Կադաստրի կոմիտեի ԱԳ/13664-2022 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն **ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Պտղնի բնակավայրի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Աբովյան համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերից քաղաքացու սեփականություն հանդիսացող **0.11697 հա** արոտավայր (կադաստրային ծածկագիր՝ 07-054-0331-0079 և համայնքի սեփականություն հանդիսացող **0.00408 հա** վարելահող (կադաստրային ծածկագիր՝ 07-054-0331-ից) փոխադրել՝ բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Մ. Մկրտչյան